



ԱՐՅԱԽԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» մարտի 2020թ.

Թիվ 15

ք. Ստեփանակերտ

Արցախի ներդրումային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2019 թվականի մարտի 15-ի թիվ 10 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

Հիմք ընդունելով Արցախի ներդրումային հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ), կանոնադրության 36-րդ կետի «ա» ենթակետը՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2019 թվականի մարտի 15-ի «Բնակարանային պայմանների բարելավման նպատակով Արցախի Հանրապետության շրջաններում պետական ֆինանսական աջակցության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 10 որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 4-րդ կետում 10-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին ենթակետ.

«10.1) ԱՀ կառավարության 2020թ. մարտի 5-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված շահառուներ՝ ԱՀ կառավարության 2020թ. մարտի 5-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված շահառուներ, որոնք Հիմնադրամի հետ կնքել են բնակելի տուն կառուցելու նպատակով տրամադրվող անհատույց պետական աջակցության գումարի նպատակային օգտագործման պայմանագիր և ստացել պայմանագրով սահմանված գումարը:»

2) 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-ին ենթակետ.
«17.1. Սույն կարգի 4-րդ կետի 10.1-ին ենթակետում նշված շահառուին բնակելի տուն կառուցելու նպատակով հիմնադրամի կողմից տրվող փոխառության գումարը տրամադրվում է անտոկոս:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ